

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով սույն թվականի սեպտեմբերի 25-ին եռօրյա պաշտոնական այցելությամբ Մայր Աթոռ ժամանեց Վրաստանի Օրթոդոքս Եկեղեցու պետ Նորին Սրբություն Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը: Սույն այցելության ընթացքում Նորին Սրբությանը, որպես նրա շքախմբի անդամներ, ուղեկցում էին՝ գերաշնորհ Տ. Կոստանդին արքեպիսկոպոսը, գերաշնորհ Տ. Վախտանգ եպիսկոպոսը, հոգեշնորհ Տ. Կալիստրատ աբեղան և արժանապատիվ Տ. Զուրաբ ավագ քահանան:

Երևանի Հարավային օդանավակայանում Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսը ողջունեց ժամանումը Վրացական քույր Եկեղեցու հոգևոր պետի, որից հետո երկու Հովվապետները հանդիսավոր շքերթով ու «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Սուրբ Էջմիածնի Մայր տաճար, ուր փոխանակեցին եղբայրական սիրո և գնահատանքի ջերմ խոսքեր:

Սեպտեմբերի 26-ին, կիրակի օրը, Մայր տաճարում մատուցված սուրբ պատարագի արարողությանը ներկա եղան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը: Պատարագի ընթացքում երկու Հայրապետների միջև փոխանակվեցին ճառեր:

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհարանի սեղանատը, ի պատիվ Վրաց Եկեղեցու հոգևոր պետի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

Սեպտեմբերի 27-ին Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը քաղաքավարական այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Տիար Ռուբեն Պարսամյանին:

Մայր Աթոռում գտնվելու օրերին Վրաց Եկեղեցու գահակալն ու նրա շքախմբի անդամները այցելեցին Երևանի Ս. Սարգիս եկեղեցի և Ծիծեռնակաբերդում ծաղկեպսակ կետեղեցին Հայ նահատակաց հուշարձանին:

Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը Մայր Աթոռ այցելության առթիվ Ամենայն Հայոց Հայրապետի հետ ունեցավ խորհրդակցություններ էկումենիկ ոգով, մեր օրերին հետաքրքրություն ներկայացնող եկեղեցական մի շարք հարցերի շուրջ:

Սեպտեմբերի 28-ին Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը և նրա շքախմբի անդամները հրաժեշտ տվեցին Հայոց Հայրապետին և լավագույն տպավորություններով մեկնեցին Թբիլիսի:

Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսի սույն այցելությունը Մայր Աթոռ առավել ևս սերտացրեց և ամրապնդեց Հայաստանյայց Առաքելական և Վրացական Օրթոդոքս Եկեղեցիների միջև հաստատված դարավոր բարեկամական կապերն ու եղբայրական համագործակցությունը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
27 սեպտեմբեր 1982 թ.